ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 25.05.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2020/98

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «Նակոյլ » ՍՊԸ-ի տնօրեն

Ա. Ենգիբարյանի (պետական գրանցման համար՝ 03 Ա 069602),

«Նակոյլ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ

Է. Կարապետյանի (լիազորագիր տրված՝ 13.05.2020թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության՝ 06.05.2020թ. թիվ 26/26-1/6675-2020 գրությամբ «Նակոյլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության՝ 04.05.2020թ. թիվ ՊՆ/ՊՆ/02/1395-2020 գրության հիման վրա, 06.05.2020թ. թիվ 26/26-1/6675-2020 գրությամբ նախաձեռնել է «Նակոյլ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝

Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Նակօյլ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկներն և դիրքորոշումը.

«Նակօյլ» ՍՊԸ-ն 13.05.2020թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է, որ «Նակօյլ» ՍՊԸ-ն ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/23 ծածկագրով ընթացակարգին մասնակցելիս ներկայացրել է բոլոր պահանջվող փաստաթղթերը, այդ թվում և բանկային երաշխիքի սկանավորված տարբերակը, armeps համակարգի միջոցով 02.04.2020թ.:

Ընկերությունը հայտնել է, որ 03.04.2020թ. կազմվել է բանկային երաշխիքի հետ ներկայացվող ուղեկցող կից գրությունը և բանկային երաշխիքի բնօրինակի հետ հանձնվել է համապատասխան կոմպետենտ աշխատակցին, որը և պետք է ներկայացներ փաստաթղթերը գնահատող հանձնաժողովին մինչև 06.04.2020թ. ժամը 17:00-ն:

Սակայն 06.04.2020թ. տվյալ աշխատակցի մոտ ի հայտ են եկել առողջական խնդիրներ: Հետևելով թեժ գծի հրամանգներին և դիմելով թաղային սպասարկող բժշկին՝ տվյալ աշխատակցին հրահանգել են ինքնամեկուսանալ՝ հնարավոր կորոնավիրուսի կասկածով, մինչև ախտանիշների առավել ակնհայտ դառնալը կամ վերանալը: Ընկերությունը հայտնել է, որ այդ օրը փորձել են կազմակերպել փաստաթղթերի փոխանցումը ժամանակին, սակայն մի շարք աշխատակիցների հեռահար աշխատելու, մյուսների ամենամյա հասանելի արձակուրդներում գտնվելու, ինչպես նաև տեղաշարժի սահմանափակման պատճառով, տվյալ գործընթացը չի հաջողվել կազմակերպել ժամանակին:

Ընկերությունը հայտնել է, որ այնուհետև չստանալով ծանուցում անհամապատասխանության շտկման մասին՝ ինչը միշտ լինում է բացթողումների դեպքում, համարել են, որ համաշխարհային պանդեմիայի պատճառով հայտարարված արտակարգ դրության պայմաններում, երբ բոլոր ինֆորմացիոն աղբյուրներից հայտնում էին հեռահար աշխատանքի անցնելու և միջանձնային շփումները սահմանափակելու մասին, այս դեպքում ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԳՓՁ վարչության բաժինը ևս անցել է հեռահար աշխատանքի և էլեկտրոնային տարբերակը բավարար է:

Ընկերությունը հայտնել է, որ անտրամաբանական է կատարել հրավերով նախատեսված պահանջները, դիմել բանկ՝ անցնելով բանկային երաշխիքի ստացման

բոլոր փուլերը, ստանալ բանկային երաշխիք, ներկայացնել այն էլեկտրոնային տարբերակով և միտումնավոր չներկայացնել բնօրինակը:

Ամփոփելով՝ Ընկերությունը խնդրել է ըմբռնումով մոտենալ՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետությունում հայտարարված արտակարգ դրությունը և հատկապես ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/23 ծածկագրով ընթացակարգի անցկացման ժամանահատվածում տիրող անորոշության մթնոլորտը, երբ պարզ չէր թե աշխատելու թույլտվություն ունեցող կազմակերպություններից, որը ինչ կարգով էր աշխատում, ինչպես նաև գործում էր տեղաշարժի սահմանափակման ռեժիմը:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/98 ընթացակարգի շրջանակներում 14.05.2020թ. ժամը 11:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, տնօրենը ապահովել է իր և ներկայացուցչի մասնակցությունը, ովքեր հայտնել են վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) 04.05.2020թ. թիվ ՊՆ/ՊՆ/02/1395-2020 գրությամբ հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/23 ծածկագրով գնման ընթացակարգին (հետայսու նաև՝ Ընթացակարգ), ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել նաև «Նակօյլ» ՍՊ ընկերությունը (հետայսու նաև՝ Մասնակից): Հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանված եղել 03.04.2020թ., և Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 4.3 կետի 4-րդ ենթակետի և 2-րդ մասի 2.5 կետի համաձայն՝ «Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտի ապահովում կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ մասնակիցը դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ.»:

Պատվիրատուն հայտնել է, որ «Նակօյլ» ՍՊԸ-ն հայտով էլեկտրոնային գնումների armeps.am համակարգով որպես հայտի ապահովում ներկայացրել է բանկային երաշխիքի արտատպված (սկանավորված) տարբերակը, սակայն մինչև 06.04.2020թ. Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացրել իր կողմից բանկային երաշխիքի ձևով ներկայացրած հայտի ապահովման բնօրինակը, ուստի 21.04.2020թ. գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը, մերժել է «Նակօյլ» ՍՊԸ-ի հայտը:

Պատվիրատուն հայտնել է. որ ներկայացնում է Մասնակցի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը՝ գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/98 ընթացակարգի շրջանակներում 14.05.2020թ. ժամը 11:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2020/98 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2020/98 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարվել է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/23 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Նակօյլ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/23 ծածկագրով ընթացակարգի հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել 03.04.2020թ. և «Նակօյլ» ՍՊԸ-ն մինչև 06.04.2020թ. ժամը 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացրել իր կողմից բանկային երաշխիքի ձևով ներկայացրած հայտի ապահովման բնօրինակը, ուստի 21.04.2020թ. գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետը, մերժել է «Նակօյլ» ՍՊԸ-ի հայտը:

3. ՀՀ պաշտպանության նախարարությունը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի

կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 45-րդ կետի դրույթով, Ընկերության տվյալները՝ համապատասխան հիմքերով՝ լիազոր մարմնին ներկայացրել է 04.05.2020թ. թիվ ՊՆ/ՊՆ/02/1395-2020 գրությամբ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության՝ 06.05.2020թ. թիվ 26/26-1/6675-2020 գրությունը և ՀՀ պաշտպանության նախարարության՝ 04.05.2020թ. թիվ ՊՆ/ՊՆ/02/1395-2020 գրությունը՝ կից փաստաթղթերով, «Նակոյլ» ՍՊԸ-ի դիրքորոշումը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով

նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետով սահմանվում է, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարվել է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/23 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Նակօյլ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/23 ծածկագրով ընթացակարգի հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել 03.04.2020թ. և «Նակօյլ» ՍՊԸ-ն մինչև 06.04.2020թ. ժամը 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացրել իր կողմից բանկային երաշխիքի ձևով ներկայացրած հայտի ապահովման բնօրինակը, ուստի 21.04.2020թ. գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետը, մերժել է «Նակօյլ» ՍՊԸ-ի հայտը:

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի դրույթով, Ընկերության տվյալները՝ համապատասխան հիմքերով՝ լիազոր մարմնին ներկայացրել է 04.05.2020թ. թիվ ՊՆ/ՊՆ/02/1395-2020 գրությամբ:

Վերը նշված փաստերով պայմանավորված և հիմք ընդունելով ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/23 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 3 արձանագրությունը՝ 21.04.2020թ. Ընկերության հայտի մերժման վերաբերյալ, արձանագրում եմ, որ «Նակօյլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել 21.04.2020թ., սակայն Պատվիրատուն Ընկերության տվյալները՝ համապատասխան

հիմքերով, գրավոր ուղարկել է լիազորված մարմին 04.05.2020թ., որի պայմաններում Պատվիրատուի կողմից խախտվել է Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը (այդ թվում՝ մասնակցի տվյալները) լիազորված մարմին ներկայացնելու Կարգի 45-րդ կետով սահմանված ժամկետը:

Այս տեսանկյունից հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումը որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է: Միաժամանակ գնումների գործընթացի կազմակերպման կարգը սահմանող ՀՀ կառավարության 05.04.2017թ. N 526-Ն որոշումը հստակ կարգավորում է գնման գործընթացի իրականացման կարգը՝ փուլ առ փուլ և ժամկետները:

Ընդ որում՝ համապատասխան ժամկետային սահմանափակումներ նախատեսելն ինքնանպատակ չէ և ուղղված է կամայականություններից խուսափելուն և ժամանակին իրականացնելուն, քանի որ յուրաքանչյուր դեպքում ուղղված է իրավունքների և պարտականությունների իրագործմանը:

Այսպիսով՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ուղարկելը Պատվիրատուի պարտականությունն է, այն իմպերատիվ դրույթ է, որի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել իրավահարաբերության առաջացումը:

Հակառակ դեպքում Կարգի 45-րդ կետով սահմանված դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը:

Այսպիսով՝ ժամկետային սահմանափակումները հետապնդում են իրավական որոշակիություն ապահովելու նպատակ որպես պետությունում իրավական որոշակիության և կայունության երաշխավորման միջոց:

Միաժամանակ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

ՀՀ սահմանադրական դատարանը 02.04.2014թ. կայացրած թիվ ՍԴՈ-1142 որոշմամբ իրավական որոշակիության սկզբունքի վերաբերյալ հայտնել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Իրավական որոշակիության, իրավական անվտանգության և օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքները հանդիսանում են իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերը: Սահմանադրական դատարանը 2006թ. ապրիլի 18-ի ՍԴՈ-630 որոշման մեջ, մասնավորապես, արձանագրել է, որ «... օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (res judicata) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը»: Առավել ևս իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները: Բացի դրանից, իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ:»:

Վերը հիշատակված իրավական նորմերի նման մեկնաբանությունը բխում է նաև իրավական ակտերի որոշակիության սկզբունքից, որն իրավական պետությունում գործող

կարևորագույն սկզբունքներից մեկն է, իսկ Հայաստանի Հանրապետությունը, ինչպես հռչակված է ՀՀ Սահմանադրության թե՛ մինչև 25.12.2015թ. գործող խմբագրությամբ, թե՛ ներկայում գործող խմբագրությամբ 1-ին հոդվածով, իրավական պետություն է:

Վերոգրյալ իրավանորմերի մեկնաբանության և սույն գործի փաստական հանգամանքների համադրված վերլուծության արդյունքում արձանագրում եմ, որ տվյալ դեպքում Պատվիրատուի կողմից չի պահպանվել Կարգի 45-րդ կետով սահմանված իմպերատիվ դրույթը՝ այն է հինգ աշխատանքային օրյա ժամկետը: Ընդ որում՝ օրենսդրությունը չի նախատեսում նշված ժամկետը վերականգնելու ինստիտուտը, հետևաբար, տվյալ դեպքում հինգ աշխատանքային օրյա ժամկետի խախտման հանգամանքները չեն դիտարկվում:

Նման պայմաններում գտնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել և հանգեցնել «Նակօյլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության՝ 06.05.2020թ. թիվ 26/26-1/6675-2020 գրությամբ «Նակօյլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**